ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՇՄՆԷՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/24» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան Մասնակցում էին՝	19 հոկտեմբերի 2026 թ.ժամը՝ 12:00
Հանձնաժողովի նախագահ՝	Մ. Վարդանյան
Հանձնաժողովի անդամներ՝	Ն. Գալստյան
	Ա. Դավթյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ս. Ղազարյան

1. Գնման առարկան և նախահաշվային գները

«ՇՄՆԷՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/24» ծածկագրով գնումը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիմքով:

Չ/Հ	Ապրանքի անվանումը	նախահաշվային գինը /ՀՀ դրամ/
1	սեղան՝ ղեկավարի	100000
2	գրասեղաններ	225000
3	գրապահարաններ	120000
4	սեղաններ	200000
5	զգեստապահարաններ	100000
6	բազկաթոռ՝ ղեկավարի	110000
7	աթոռ մետաղյա	2700000
8	խոհանոցային պահարաններ	40000
9	ճաշասեղաններ	120000
10	կենցաղային սառնարաններ	190000
11	չհրկիզվող պահարաններ	200000
12	ՀՀ զինանշան	90000
13	դրոշներ	260000

2. Հայտերի բացման և հակադարձ աճուրդի անցկացման տվյալները

Հայտերը eauction.armeps.am համակարգում բացվել են 2026 թվականի հոկտեմբերի 16-ին՝ ժամը 10:00-ին:

Հակադարձ աճուրդը eauction.armeps.am համակարգում սկսվել է 2026 թվականի հոկտեմբերի 19-ին՝ ժամը 10:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները

Մասնակցի անվանումը	**Էլեկտրոնային փոստի հասցե**	**ՀՎՀՀ**	**Հեռախոսահամար**
Արմեն Ռաֆայելյան Ռումելի ԱՁ	mk.armada88@mail.ru	23319519	+37493006797
ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ	btraiding@list.ru	04465562	+37498680718
«ԴՈՄՈՒՍ» ՓԲԸ	gor.arakelyan@domus.am	02842758	+374 33737770
Լեվան ՍՊԸ	levanllc@mail.ru	04726413	+374 44604066
Արգավանդ Կահույք ՍՊԸ	armeps@inbox.ru	01261634	+37443434342
ՎԱՆԵՍԱ ՍՊԸ	vanesa.tender@mail.ru	02337713	+37499016661
ԱՐՄՖԼԱԳՍ ՍՊԸ	nik.manucharyan@gmail.com	01357976	+37494703307

4. Շահերի բախման վերաբերյալ հայտարարությունները

4.1 Գնահատող հանձնաժողովի անդամները և քարտուղարը «ՇՄՆԷՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/24» ծածկագրով մրցույթի գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո ստորագրել են հայտարարություն, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունեն շահերի բախում:

5. Հայտերի էլեկտրոնային ձևով կազմումը և ներկայացումը

5.1. «ԴՈՄՈՒՍ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Հավելված N 1 դիմում-հայտարարությունն էլեկտրոնային ստորագրված չէ: Մասնակցին առաջարկել ներկայացնել էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված Հավելված N 1 դիմում-հայտարարությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Պահանջվող փաստաթղթերի առկայությունը և արձանագրված հարցերը

6.1. «ԴՈՄՈՒՍ» ՓԲԸ-ն չի ներկայացրել իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը՝ Հավելված N 1.3-ը, իսկ ներկայացված Հավելված N 1 դիմում-հայտարարությունն էլեկտրոնային ստորագրված չէ: Մասնակցին առաջարկել ներկայացնել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հղումը պարունակող Հավելված N 1.3-ը և էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված Հավելված N 1 դիմում-հայտարարությունը:

6.2. «ՎԱՆԵՍԱ» ՍՊԸ-ի՝ 10-րդ չափաբաժնի ապրանքի ամբողջական նկարագրում ֆիրմային անվանման, ապրանքային նշանի և մակնիշի դաշտերում նշված է «կենցաղային սառնարաններ», իսկ արտադրողի անվանման դաշտում՝ «ՉԺՀ»: Անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող սառնարանի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մոդելը և արտադրողի անվանումը՝ առանց առաջարկվող ապրանքը փոխելու:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Մասնակիցների նախնական և վերջնական գնային առաջարկները

Գումարները՝ ՀՀ դրամ: «Արժեք»՝ առանց ԱԱՀ, «գին»՝ ընդհանուր գումար:

Չ/հ	Տեղ	Մասնակից	Նախնական արժեք	Նախնական գին	Վերջնական արժեք	Վերջնական գին	Կարգավիճակ
1	1	Արմեն Ռաֆայելյան Ռումելի ԱՁ	1 000 000	1 000 000	1 000 000	1 000 000	Մերժված
1	1	ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ	1 000 000	1 200 000	1 000 000	1 200 000	Մերժված
2	1	Արմեն Ռաֆայելյան Ռումելի ԱՁ	1 000 000	1 000 000	1 000 000	1 000 000	Մերժված
2	1	ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ	1 000 000	1 200 000	1 000 000	1 200 000	Մերժված
3	1	Արմեն Ռաֆայելյան Ռումելի ԱՁ	1 000 000	1 000 000	1 000 000	1 000 000	Մերժված
3	1	ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ	1 000 000	1 200 000	1 000 000	1 200 000	Մերժված
4	1	Արմեն Ռաֆայելյան Ռումելի ԱՁ	1 000 000	1 000 000	1 000 000	1 000 000	Մերժված
4	1	ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ	1 000 000	1 200 000	1 000 000	1 200 000	Մերժված
5	1	ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ	1 000 000	1 200 000	1 000 000	1 200 000	Մերժված
5	1	Արմեն Ռաֆայելյան Ռումելի ԱՁ	1 000 000	1 000 000	1 000 000	1 000 000	Մերժված
6	1	«ԴՈՄՈՒՍ» ՓԲԸ	91 665	109 998	70 000	84 000	Գնահատման փուլում
6	2	Լեվան ՍՊԸ	91 665	109 998	86 000	103 200	Գնահատման փուլում
6	3	Արգավանդ Կահույք ՍՊԸ	91 500	109 800	87 840	105 408	Գնահատման փուլում
6	4	ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ	1 000 000	1 200 000	1 000 000	1 200 000	Մերժված
7	1	Արգավանդ Կահույք ՍՊԸ	2 250 000	2 700 000	1 250 000	1 500 000	Գնահատման փուլում
7	2	ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ	3 000 000	3 600 000	1 900 000	2 280 000	Գնահատման փուլում
7	3	ՎԱՆԵՍԱ ՍՊԸ	100 000 000	120 000 000	2 050 000	2 460 000	Գնահատման փուլում
7	4	Լեվան ՍՊԸ	2 250 000	2 700 000	2 250 000	2 700 000	Գնահատման փուլում
8	1	Արմեն Ռաֆայելյան Ռումելի ԱՁ	1 000 000	1 000 000	1 000 000	1 000 000	Մերժված
8	1	ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ	1 000 000	1 200 000	1 000 000	1 200 000	Մերժված
9	1	Արմեն Ռաֆայելյան Ռումելի ԱՁ	1 000 000	1 000 000	1 000 000	1 000 000	Մերժված
9	1	ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ	1 000 000	1 200 000	1 000 000	1 200 000	Մերժված

Չ/հ	Տեղ	Մասնակից	Նախնական արժեք	Նախնական գին	Վերջնական արժեք	Վերջնական գին	Կարգավիճակ
10	1	ՎԱՆԵՍԱ ՍՊԸ	100 000 000	120 000 000	158 000	189 600	Գնահատման փուլում
10	2	ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ	1 000 000	1 200 000	1 000 000	1 200 000	Մերժված
11	1	ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ	1 000 000	1 200 000	1 000 000	1 200 000	Մերժված
12	1	ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ	1 000 000	1 200 000	1 000 000	1 200 000	Մերժված
13	1	ԱՐՄՖԼԱԳՍ ՍՊԸ	260 000	260 000	200 000	200 000	Գնահատման փուլում
13	2	ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ	1 000 000	1 200 000	216 666.60	259 999.92	Գնահատման փուլում

Գնային արժեքների, նշված ԱԱՀ-ի դրույքաչափերի և ընդհանուր գների համադրմամբ թվաբանական անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. Հայտերի վերաբերյալ հարցումները և պատասխանները

8.1 Ընթացակարգի վերաբերյալ ստացվել է մեկ հարցում, որին տրվել է պարզաբանում:

9. Մասնակցության իրավունքի վերաբերյալ տվյալները

9.1 Մասնակիցներն ընդգրկված չեն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

10. Փոխկապակցված անձանց վերաբերյալ տվյալները

10.1 Մասնակիցներն ընդգրկված չեն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց ցուցակում:

11. Իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը

11.1. «ԴՈՄՈՒՍ» ՓԲԸ-ն չի ներկայացրել իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը: Անհամապատասխանությունը ենթակա է շտկման՝ սույն արձանագրության 6.1 կետին համապատասխան:

11.2. «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ն ներկայացրել է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հղումը:

11.3. «ՎԱՆԵՍԱ» ՍՊԸ-ն ներկայացրել է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հղումը:

11.4. «ԱՐՄՖԼԱԳՍ» ՍՊԸ-ն ներկայացրել է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հղումը:

12. Առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը

12.1. 6-րդ չափաբաժնի մասով «ԴՈՄՈՒՍ» ՓԲԸ-ի առաջարկվող ապրանքի նկարագրի տեխնիկական ցուցանիշները համապատասխանում են ներկայացված պահանջներին:
12.2. 7-րդ չափաբաժնի մասով «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի առաջարկվող ապրանքի նկարագրի տեխնիկական ցուցանիշները համապատասխանում են ներկայացված պահանջներին:
12.3. 10-րդ չափաբաժնի մասով «ՎԱՆԵՍԱ» ՍՊԸ-ի նկարագիրը ենթակա է հստակեցման՝ սույն արձանագրության 6.2 կետով:
12.4. 13-րդ չափաբաժնի մասով «ԱՐՄՖԼԱԳՍ» ՍՊԸ-ի նկարագրի տեխնիկական ցուցանիշները համապատասխանում են ներկայացված պահանջներին:

13. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցները

13.1. 6-րդ չափաբաժին՝ «ԴՈՄՈՒՍ» ՓԲԸ՝ 84 000 դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

13.2. 7-րդ չափաբաժին՝ «Արգավանդ Կահույք» ՍՊԸ՝ 1 500 000 դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

13.3. 10-րդ չափաբաժին՝ «ՎԱՆԵՍԱ» ՍՊԸ՝ 189 600 դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

13.4. 13-րդ չափաբաժին՝ «ԱՐՄՖԼԱԳՍ» ՍՊԸ՝ 200 000 դրամ՝ վերջնական գին, ԱԱՀ-ի դրույքաչափը՝ 0%:

Ընտրված մասնակիցների վերաբերյալ վերջնական որոշումները կայացվելու են շտկումների գնահատումից հետո:

14. Հանձնաժողովի որոշումները

14.1. 1,2,3,4,5,8,9,11 և 12-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ կառավարության 18.05.2017 թ. N 534-Ն որոշման N 1 հավելվածի 10-րդ կետի 3-րդ ենթակետի հիմքով, քանի որ բոլոր վերջնական գները գերազանցում են չափաբաժնի համար սահմանված գինը: Քարտուղարին հանձնարարել ապահովել համապատասխան հայտարարության հրապարակումը սահմանված կարգով:

14.2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017 թ. N 526-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 41-րդ կետը՝ անհամապատասխանությունների շտկման նպատակով նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով:

14.3. «ՎԱՆԵՍԱ» ՍՊԸ-ին առաջարկել ներկայացնել սույն արձանագրության 6.2 կետում նշված հստակեցումները:

14.4. «ԴՈՄՈՒՍ» ՓԲԸ-ին առաջարկել ներկայացնել էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված Հավելված N 1 դիմում-հայտարարությունը և իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հղումը պարունակող Հավելված N 1.3-ը՝ սույն արձանագրության 5.1, 6.1 և 11.1 կետերով արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով:

14.5. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել 2026 թվականի հոկտեմբերի 20-ին էլեկտրոնային եղանակով և համակարգի միջոցով մասնակիցներին ծանուցել արձանագրված անհամապատասխանությունների մասին: Շտկումները ներկայացնել 2026 թվականի հոկտեմբերի 21-ի ընթացքում՝ ծանուցման մեջ նշված վերջնաժամկետով: Հայտերի գնահատման և ընտրված մասնակիցների վերաբերյալ վերջնական որոշումները կայացնել 2026 թվականի հոկտեմբերի 22-ի՝ ժամը 10:00-ի նիստում՝ շտկումների գնահատումն ավարտելուց հետո:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

15. Հանձնաժողովի հաջորդ նիստի օրը ժամը և վայրը

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 22.10.2026 թ.՝ ժամը 10:00-ին, ք. Երևան, Ա. Արմենակյան 129 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0

16. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝	Ստորագրող ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՆՅԱՆ 3311910222 2026-10-20 14:54:28 GMT+04:00 Հավաստված է ԷԵՆԳ-ի կողմից	Մ.Վարդանյան
Հանձնաժողովի անդամներ՝	Ստորագրող ՆՈՆՆԱ ԳԱԼՍՏՅԱՆ 7405780199 2026-10-20 14:48:20 GMT+04:00 Հավաստված է ԷԵՆԳ-ի կողմից	Ն. Գալստյան
	Ստորագրող ԱՆԻ ԴԱՎԹՅԱՆ 5802870117 2026-10-20 11:50:26 GMT+04:00 Հավաստված է ԷԵՆԳ-ի կողմից	Ա.Դավթյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ստորագրող ՍՈՒՍԱՆՆԱ ՂԱԶԱՐՅԱՆ 7409840749 2026-10-20 11:35:29 GMT+04:00	Ս. Ղազարյան